ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3105 - Ա **22 ապրիլի 2009թ.**

ՆՈՐՔԻ 17-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 26 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵԴՐԱԿ ՎԱԽԹԱՆԳԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ, ԵՋՆԻԿ ՎԱԽԹԱՆԳԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ, ՎԻԿՏՈՐ ԶԱՔԱՐԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սեդրակ Վախթանգի Անտոնյանի (ծնված 12.02.1957թ.), Եզնիկ Վախթանգի Անտոնյանի (ծնված 18.12.1954թ.), Վիկտոր Զաքարի Անտոնյանի (ծնված 01.11.1930թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նորքի 17-րդ փողոցի հ.26 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 639.74քմ, որից 600քմ մակերեսով հողամասը Սեդրակ Վախթանգի Անտոնյանին, Եզնիկ Վախթանգի Անտոնյանին, Վիկտոր Զաքարի Անտոնյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 39.74քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1991 թվականը, 29.03.2005թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 02.04.2009թ. հ.20-Ել-2700 եզրակացությունը, համաձայն որի Նորքի 17-րդ փողոցի հ.26 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նորքի 17-րդ փողոցի հ.26 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Սեդրակ Վախթանգի Անտոնյանի, Եզնիկ Վախթանգի Անտոնյանի, Վիկտոր Զաքարի Անտոնյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 600քմ մակերեսով հողամասին կից 39.74քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 39.74քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Նորքի 17-րդ փողոցի հ.26 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Նորքի 17-րդ փողոցի հ.26 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Սեդրակ Վախթանգի Անտոնյանի, Եզնիկ Վախթանգի Անտոնյանի, Վիկտոր Զաքարի Անտոնյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Նորք-Մարաշ թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ